



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՐԱՄԱՆ

« 6 » մայիսի 2011թ.

№762-Ն

« Գրանցված է »

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից

23 հունիսի 2011 թ.

Պետական գրանցման թիվ 12411265

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի
N1-05/05-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝

Հրամայում եմ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի մայիսի 30-ի «Պարտադիր
սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին»
հրահանգը հաստատելու մասին» N 1-05/05-Ն հրամանում կատարվող լրացումը՝
համաձայն հավելվածի:

Նախագահ՝

Գ. Խաչատրյան

<p><i>Համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ 9 հունիսի 2011թ. N 332-Ն</i></p>	<p><i>Համաձայնեցված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ</i></p>	<p><i>Համաձայնեցված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ</i></p>	<p><i>Հավելված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 6 մայիսի 2011թ. N 762-Ն հրամանի</i></p>
--	---	--	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 30-Ի «ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1-05/05-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Հրամանով հաստատված «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հավելված 4-ը III բաժնից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ IV բաժնով`

«Բ Ա Ժ Ի Ն IV

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԻ

Գործունեության տեսակը (կոդը)				Տեսակարար կշիռը (%)
բաժին	հատված	խումբ	դաս	

• IV բաժնում նշվում են հաշվետու տարում ապահովադրի (անհատ ձեռնարկատեր, նոտար) ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ տեսակարար կշիռների նվազման), ընդ որում` «Գործունեության տեսակը (կոդը)» սյունակում գործունեության տեսակները (կոդերը) նշվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի Հանրապետության դասակարգիչ հաստատելու մասին» N 372-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին համապատասխան (օրինակ` C2591 կոդը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91/ համապատասխանում է «Մետաղական տակաոների և համանման այլ տարողությունների արտադրություն»

գործունեության տեսակին»), իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Այս աղյուսակում նշված տեղեկությունները օգտագործվում են վիճակագրության նպատակով և չեն կարող հիմք հանդիսանալ սոցիալական վճարների հաշվարկման (վերահաշվարկման) համար:»: